ՀԱՆՐԱԳԻՐ 27/22

Ներկայացվող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը՝

ՀՀ Վարչապետի աշխատակազմ

Պաշտոնատար անձի անունը և ազգանունը՝

-

Ոլորտ՝

Այլ

Հանրագրի վերնագիրը՝

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԻՆՈՂՆԵՐԻՑ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼԻՍ ԴԻՄՈՒՄԻ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԻ ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ։

Առաջարկը՝

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքում իրականացնել համապատասխան փոփոխություններ տեղեկատվություն տնօրինողներից հանրամատչելի տեղեկություններ ստանալու հարցում ուղարկելիս դիմումի ստորագրված լինելու պայմանի ոչ պարտադիր դարձնելու ուղղությամբ։

Հիմնավորումը՝

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը։ Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը)։ Դիմողի՝ տեղեկատվություն տնօրինողներին ուղարկված հարցումը պետք է ունենա ստորագրություն ոչ միայն ոչ հանրամատչելի, այլև հանրամատչելի տեղեկություններ ստանալու հարցումների համար։ Կարծում ենք, որ այն դեպքում, երբ տեղեկությունները հասանելի են ցանկացած դիմողի համար, չեն պարունակում անձնական տվյալներ կամ օրենքով պաշտպանվող գաղտնի տեղեկություններ, տվյալների փոխանցման անվտանգության հետ կապված մեխանիզմներ կիրառելու անհրաժեշտություն չի առաջանում։ Տեղեկատվություն տնօրինողը , հարցումը ստանալիս կարող է դասակարգել այն, տեսնելով թե արդյո՞ք այն հանրամատչելի է, թե ոչ, և դիմումի բովանդակության մեջ ստորագրություն չհայտնաբերելով, անպատասխան թողնել միայն այն դեպքում, երբ դիմումը պարունակում է ոչ հանրամատչելի տեղեկատվության ստանալու պահանջ։ Այս փոփոխությունը շատ ավելի դյուրին կդարձնի դիմողների համար տեղեկատվություն տնօրինողներից հանրամատչելի տեղեկատվություն ստանալու ընթացակարգը։

Կից նյութեր՝

-

Հանրագրի գլխավոր նախաձեռնող՝

Թվային Հայաստան

Հասցե՝ Արամ Խաչատրյան 13, բն 44

Էլ փոստ՝ info@digital-armenia.am

Հեռախոսահամար՝ +37493344433

Digitally signed by KRMOYAN SUREN 1302770080
Date: 2022.11.08 14:22:11 AMT